Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Dr. Ing. Professor

[illegible] Dreikreuzbf

Berlin Mai 1904

361
P-31

01
31

1 MAR 2010

ՀԵՂ ՀՈՎԱՆԵԱՆ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1903—1904

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

0
-ՏԵ

ԹԱՒՐԻԶ

1904

Առաքաստանի Հայերի Թէմական Արտատպիչ
Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի Ցիշատակին

11 8 APR 2013
370
2346-ՏԵ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԵՂՀՈՎԱՆԵԱՅԻ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻՒ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1903—1904

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԹԱՒՐԻԶ

1904

Առրպատականի Հայերի Թէմական Արգասիք

Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի Յիշատակին

42.766

ՀՐՈՂԱՐՏԱԿ ՇԱՀՆՇԱՀ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Ամենակարող Աստուծով ծագեց յաղթութեան ու փառքի աստղը եւ Ամենակալի օգնութեամբ Շահութեան կնիքն ստացաւ **ՄՈՒՋԱՖՖԷՐ - ԷԴԴԻՆ ՇԱՀԸ**։

(ԿՆԻՔ)

Որովհետեւ շարունակ մեր արքայական փափագն է եղել տարածելու քարին ու գեղեցիկը և քաջալերելու այն անձանց, որոնք ձեռնամուխ են լինում նմանօրինակ գործերի, այս առթիւ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը ազերբարկու եղած լինելով առ սաս օրհնեալ Գահոյից ընդունելու յիշեալ ընկերութիւնը մեր արքայական (տուր Անձնաս-

բութեան) պաշտպանութեան ներքոյ, ուստի ցոյց տալու համար մեր համատարած շնորհը բարձր տէրութեանս բոլոր հպատակներին, թագաւորական այս լուսաճաճանչ Հրովարտակի ծագմամբ այդ ընկերութիւնը Մեր հովանաւորութեան ներքոյ ընդունելով, հրամայում ենք, որ այս ԱՌԱՆՁԻՆ ՁՆՈՐՀՔԻ պատճառով մեծարուի և յոյս ունենայ Մեր ողորմածութեան վրայ:

Ձեմիսալ ամիս

1318

Ֆէրմանը կրում է նաև Ամարէզի - Ազատ Սաղրազամի և Մուշերը - Դավլէի կնիքները:

Այն թանձրամած աղջամուղջը, տգիտութեան, նախապաշարման և սնոտիապաշտութեան սև քողը, որ անյիշելի ժամանակներից իվեր պատել են ընդհանրապէս պարսկահայ գեղջկուհիի մտաւոր հորիզոնը, ցրուելու, բացուելու վրայ են: Վաղուցուայ փայփայուած, զուրգուրուած գաղափարը իրականութեան հող է գտնում: Սրտի անհուն հրճուանքով աւետում ենք, թէ Մեծ. Պրն. Տիգրան Ամիրիկեանը, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց Բարանդուզ գաւառի Թրքախօս Բաբառու և Դիզաթէքի հայ գիւղերում 4-5 տարուց ի վեր, կամենալով մի իրական, շօշափելի ծառայութիւն մատուցանել լքուած, անտեսապէս քայքայուած և իր ազգային առանձնայատկութիւնները կորցրած պարսկահայ գեղջուկի կրթական դործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ 39 հայաբնակ գիւղ ունեցող, բաղկացած 1200 տնից, Որմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով, լուսոյ տաճարներ հիմնելով այն վայրերում, ուր կարիքը մեծ է, ուր շրջապատող օտարադաւան-օտարախօս տարրը, իր մահաշունչ երախը լայն բացած, սպառնում է կլանել նրանց... Մեծանուն բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առ այժմ հասցնել 20-ի, նպաստ յատկացնելով իւրաքանչիւրին տարեկան 250-թուման: Դպրոցները պիտի բացուին պարբերաբար, տարէցտարի հինների վրայ 2 նորը աւելանալով. նորա պէտք է զբաղուին թեմիս վիճակաւոր Առաջնորդի հովանաւորութեան

և ընկերութեանս անմիջական հսկողութեան և կառավարութեան ներքոյ։ Անցեալ 1903 թուի աշնան եղած 2 նախկին դպրոցների թիւը աւելացաւ Ռահուայի և Նախիջևան-Թէփէի երկսեռ դպրոցներով. առաջինը, որ պահում էր ընկերութիւնս իր ծախքով, զրուեցաւ բարերարի հաշուին, իսկ երկրորդը նոր հիմնուեցաւ։ Հիմնուած ուսուցչական խմբի անդամների հաղորդած փաստացի ցուցմունքների և զրաւոր վիճակագրութեան վրայ՝ որոշուեցաւ նոր բացուելիք դպրոցը հիմնել Ղարաղըզ գիւղում, որ կենդրոն է Ղարաճալու և Ջիրարադ գիւղերի 70 տուն բնակչով, Իքի-աղաջի դպրոցը դնել բարերարի հովանաւորութեան տակ, հետևապէս առաջիկայ 1904-5 ուս. տարեշրջանում Պրն. Տիգրան Աֆրիկեանը կունենայ 6 երկսեռ դպրոց։ Անհաւասիկ մի անգնահատելի մարդասիրական ծառայութիւն, մի եղակի գործ, որ պատիւ է բերում յարգելի բարերարին, որի անունը խոր կդրոշմուի հայ մատաղ սերնդի զգայուն ու երախտապարտ սրտում և անջնջելի կմնայ Ատրպատականի հայ ժողովրդի կրթական տարեգրութեան մէջ...։

Փափագելով իրական սեռի, մասնաւորապէս բազմաթիս օրիորդաց դպրոցների կրթական մակարդակն աւելի բարձրացնել, ընկերութեանս ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ, որ տեղի ունեցաւ անցեալ Յունիս 29-ին, վճռուեցաւ փակել 2 թաղերի արհեստանոցները, որոնք միայն կար ու ձև էին ուսուցանում և նոցա փոխարէն բանալ դ. դասարաններ ընկերութեանս հաշուով, պայմանով որ մայրենի լեզուի և այլ անհրաժեշտ առարկաների հետ աւանդուի նաև կար ու ձև։ Այս որոշումը սիրայօժար ընդունելութիւն գտաւ թեմական Առաջնորդի և Պատ. Հոգաբարձութեան կողմից, որոնք կար ու ձևի պատուաւոր հսկողութիւնը թողեցին վարչութեանս։ Աշակերտուհիների թուի սակաւութեան, ծախքերի խնայողութեան և Լիլաւայի դպրոցների փակման պատճառով գ. դասարան բացուեցաւ միայն Ղալայի Ս. Աննայեան դպրոցում, ուր յաճախում էին 8 աշակերտուհի՝ 2-ը Լիլաւայից, իսկ 6-ը Ղալայից։ Տարուայ ընթացքում կամովին հեռացաւ առաջիններից 1-ը։ Ուս. տարուայ վերջում հրապարակական քննութիւնից յետոյ, որ տեղի ունեցաւ մայրենի լեզուից, մի քանի առարկաներից և կար ու ձևից, 7 հոգին էլ արժանացան ստանալու աւարտման վկայական, այլ և իրաւունք՝ պաշտօն ստանձնելու երկդասեան դպրոցներում։ Այդ նորաբաց դասարանին նպաստ է յատկացուելու տարեկան 3000 դրամ։ Աւարտման վկայական ստացան հետևեալ աշակերտուհիները.

օր. Բէջանեան Նունէ,
,, Գորոյեան Զարուհի,
,, Գրիգորեան Սաթենիկ,
,, Թոմասեան Վարդանոյշ,

օր. Շահբազեան Փեփրոնէ,
,, Մելիք - Աբրահամեան Աստղիկ եւ
,, Զիլինկիրեան Նուարդ,

Ընկերութիւնս մտադիր է օրց. դպրոցում մտցնել նաև Ֆրանսերէն, որ ինչ ինչ նկատումներով անհրաժեշտ է և միւս կողմից ժամանակի անխուսափելի պահանջ է դարձել, եթէ իր նիւթական միջոցները ներեն, եթէ մարդասէր և ազգային նախանձախնդրութիւն ունեցող անձինք օգնութեան ձեռք կարկառեն իրան։

Ընկերութիւնս պահում է քաղաքիս ,, Արամեան ‘‘ դպրոցում 3 որդեգիր, 2-ը Դիզմթէրէ և 1-ը Բաբառու գիւղերից, Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանի դպրոցներն աւարտած ընդունակ սաներից, ապագայում նրանց իրանց գիւղերի համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։ Որդեգիրներն ապրում են վարչական անդամուհիների մօտ, դտնուելով նրանց անմիջական խնամակալութեան տակ։ Հոգացւում է նրանց ուտելիքը, հագուստը, դպրոցական թոշակն ու դասական պիտոյքները։

Ըստ առաջարկութեան Ղալայի դպրոցների տեսչութեան տրուել է 9 խիստ չքաւոր աշակերտ-աշակերտուհիների համազգեստ։ Ինչպէս և Առաջնորդարանի առաջարկութեամբ և վկայութեամբ ճանապարհածախք ու անցագիր է տրուել հայրենիք վերադարձող կամ պանդխտութեան դիմող բազմաթիւ արկածեալների, նպաստ է յատկացուել գլխաւորապէս տօների առիթով քաղաքիս կարօտ ընտանեաց, ծախսելով արժ. տէր-Աւետիս քահ. Ջաղոյեանի ձեռքով այդ նպատակով Գահիրէում հանգանակուած դրամը։ Վարժուհիների ցուցմամբ և նոցա տուած անուանական ցուցակի համաձայն համազգեստ է մատակարարուել ընկ. մանկապարտէզների չքաւոր սաներին և սանուհիներին։

Թէև անցեալ տարուայ ընդհ. ժողովը որոշել էր

ընկերութեանս նիւթական աննախանձելի դրութեան պատճառով փակել Իքի-Աղաջի և Թումաթարի դպրոցները, բայց դեր. հայր Ե. Ծ. Վ. Մուրադեանի հայրական յորդորների և խոստումների վրայ հիմնուած՝ այս տարի ևս պահուեցան այդ դպրոցները, ծանրանալով ընկ. առանց այն էլ սուղ միջոցների վրայ։ Թումաթարի դրպրոցը փոխադրուեցաւ մերձակայ Բալանիլ գիւղը, ըստ որում առաջինը իր սակաւամարդութեան պատճառով աշակերտների ցանկալի թիւ չէր տալիս։

Ընկերութիւնս, որի նպատակակէտն է՝ տալ ուսում և կրթութիւն հայ մատաղ սերնդին, հաց ու ջուր՝ խեղճ թշուառին, հագուստ՝ մերկին, լոյս՝ խաւարի մէջ խարխափող գաւառներին, միջոց՝ տնտեսական քայքայման առաջ կորագլուխ, վիզը ճուկ կանգնած հայ գեղջուկին, նիւթականի պատճառով հնարաւորութիւն չունի ընդլայնել իր գործունէութեան սահմանը։ Բազմաթիւ գիւղեր, ինչպէս Ղարաղաղի ընդարձակ գաւառը և Պարսկա-քրդստանը, ցարդ զուրկ են ուսման ու կրթութեան կենսատու լոյսից։ Գիտութեան, քաղաքակրթութեան շողը դեռ չէ թափանցել նոցա խաւարչտին խրճիթները։ Թեմիս կարիքները խիստ ծանր են, իրերի վիճակը շատ անմխիթար, իսկ արտաքին օժանդակութիւնը աննշան։ Ո՞վ պէտք է եղբայրական օգնութեան ձեռք մեկնէ դէպի այս ,, աչքից հեռացած, մտքից մոռացուած ‘‘ վայրերը։ Ո՞վ պէտք է սրբէ խեղճ թշուառի ճակատի դառն քրտինքը և աչքերի աղի արտասուքը...։

Կարիք կայ կրկնելու հազար անգամ ծամծմուած, այն պարզ ճշմարտութիւնը, բացորոշ իրողութիւնը, թէ պէտք է աշխատել լայն չափերով օգտուել ներկայ խիստ նպաստաւոր հանգամանքներից։ Կանցնի անդարձ այս բարեբաստիկ ժամանակը, կփոխուին հանգամանքները և այն ժամանակ... այն ժամանակ ամեն յոյս կորած

պէտք է համարել...։ ,, Լաւ է անագան, քան երբէք ''։

Յանուն Աստուածամայրի հայ հասարակութեան, յանուն ուսումնածարաւ և անմեղ մատաղ սերնդի կրթական գործի, հրաւէր ենք կարդում, կոչ անում մեր բազմահարուստ մեծատուններին, յիշեցնելով որ մարդս մահկանացու է, որ գերեզմանից յետոյ էլ կարելի է ապրել, որ ,, փողը որ կայ ժանգ է, ձեռքի կեղտ, այսօր կայ վաղը Աստուծով մխիթարուես...։ ,,

Յոյս ունենանք այս հրաւէրը, այս կոչը արձագանք կգտնի, թէ կմնայ ,, ձայն բառբառոյ յանապատի ''։ Արդեօք Պրն. Տիգրան Աֆրիկեանի, հանգուցեալ Արամ Ղազարեանի ազնիւ ու մարդասէր օրինակին հետևողներ կլինին, թէ ոչ։ Յուսանք և սպասենք...։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՏԱՑԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Վարչութիւնս 1903 - 4 ուս. տարեշրջանում շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նպաստները.

Պրն. Տիգրան Աֆրիկեանց Բարառու, Դիզաթէքէ-Ռահուա և Նախիջևան - թէփէ գիւղերի երկսեռ դպրոցների տարեկան նպաստը՝ 10000 դրամ։

Պրն. Ալէքսանդր Մէլիք - Ազարեանից Որմի ուսումնարանի տարեկան նպաստը՝ 300 բուբլի = 1734 դրամ 10 կոպ.,

Պրն. Ստեփան Տէր - Օհանեանից Դէրէլէքի դպրոցի տարեկան նպաստը՝ 1200 դրամ։

Ղարագաղի Աղաղան գիւղի դպրոցի թոշակներից դանձուած է 120 դրամ։

Տիկ. Թամար Արամեանից (Բագուից) նուէր 100 բուբլի = 600 դրամ։

Պրն. Միքայէլ Պապիկեանից վիճակախաղի արդիւնք՝ 400 դրամ։

Տիկ. Իսկուհի Խրիմեանից 48 օր. ,, Բարոյական պատմութիւններ '' թարգմ. Գերմաներէնից պ. Խորէն Խրիմեանի, բաշխելու ընկերութեանս դպրոցներին և այլ գրադարան - ընթերցարաններին։

Ընկերութիւնս իր հաստատութիւնների համար նուէր է ստացել հետևեալ պարբերական հրատարակութիւնները խմբագրութիւններից.

12 օրինակ պատկերազարդ ,, Պատանի '', 6 օր. ,, Վերածնութիւն '' և 57 հատ կարտ - պոստալ (1 օր. ,, Վերածնութիւն '' 6 ամսուայ համար նուիրել է Պարիզաբնակ Պրն. Յակոբ Գաբրիէլեանը), 2 օր. Ձայն Հայրենեաց, և Արտեմիս, մի - մի օր. ,, l'Arménie '' ,, Պարտէզ '', ,, Հայաթերթ '', ,, Երիտասարդ Հայաստան '', ,, Բազմավէպ '' և մի քանի № № ,, Փողովուրդ '', ,, Գուլթան '' ,, Անահիտ '', ,, Նոր - Զուղայի Լրաբեր '' և ,, Արարատ ''։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՏՈՒԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Ընկերութիւնս ներկայ տարեշրջանում տուել է հետևեալ նպաստները.

Ղալայի ,, Ս. Աննայեան '' օր. դպրոցի նորաբաց դ. դասարանի տարեկան նպաստը՝ 3000 դրամ։

Տեղացի խիստ չքաւոր ընտանիքներին, քաղաքումս ընակուող գաղթական խեղճերին և հայրենիք վերադարձող պանդուխտներին անցաղիր և ճանապարհածախք՝ 1098 դրամ 40 կոպ.,

Կոյը Թովմասի թաղման ծախքը՝ 46 դրան 90 կոպ.,

Ղալայի չքաւոր աշակերտ - աշակերտուհիներին համազգեստ՝ 187 դրան 85 կոպ.,

Ընկերութեանս 3 որդեգիրների թոշակը՝ 135 դրան,

Ղալայի դպրոցների Պատ. Հոգաբարձութեան տոնածառի զուտ արդիւնքի կէսը՝ 450 դրան,

6 օր. Ա. Ահարոնեանի ,, Խեղճեր ‘‘, Արամեան դպրոցին ըստ պահանջման տեսչութեան,

Պրն. Համբարձում Առաքելեանի ուղարկած 4 անուն գրքերից 2 - ական օրինակ Լիլաւայի Աբովեան դրադարան - ընթերցարանին։

Յաճախ հայրենիքից պանդխտութեան և ընդհակառակն դիմող արկածեալների ճանապարածախքը և անցագիրը հոգում է ընկերութիւնը, իսկ այդ նպատակի համար հանգանակուած դրամը արդէն սպառուել է։ Ընկերութիւնս անել դրութեան մէջ կմնայ, եթէ ողորմած անձինք օգնութեան ձեռք չմեկնեն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՂԱՂԱՆԻ ԴՊՐՈՑԸ

Ղարադաղում

Այս դպրոցը, որ 1900 թուին մտաւ ընկերութեանս իրաւասութեան տակ, այս տարուայ սկզբում ունէր 24 աշակերտ և աշակերտուհի, 3 բաժանմունքով։ Մի քանի աշակերտների ընտանիքով քաղաք տեղափոխուելու պատճառով այդ թիւն իջաւ 18 - ի, որոնցից 7 հոգի Իւրկիւթիւն և Ղշլաղ գիւղերից են, իսկ մնացած 11 - ը Աղաղանցի։ Դպրոցը բացուել է Սեպտ. 1 - ից, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնը սկսուել է նոյն ամսի 8 - ից, տևելով մինչ մայիս 7, երբ հրապարակական քննութիւնից յետոյ փակուեցաւ։ Դպրոցը աւելի նպատակայարմար է տեղափոխել Իւրկիւթիւն, եթէ տեղացիք խոստանան նպաստ տալ տարեկան 40 թուման, որովհետև Աղաղանը նախ աշակերտների ցանկալի թիւ չէ տալիս և երկրորդ մի քանի սեւահոգի և խաւարասէր անձինք իրանց կրքերին յագուրդ տալու համար կռուախնձոր են շինել դպրոցը։ Այս տարի գանձուել է միայն 120 դրան թոշակագրամ։ Դպրոցը պահւում է ընկերութեանս հաշուով։

ԲԱԲԱՌՈՒԻ ԴՊՐՈՑԸ

Բաբառնդուզ գաւառում

Դպրոցի բացումը տեղի է ունեցել Սեպտ. 20 - ին, իսկ կանոնաւոր պարապմունքները սկսուել են Հոկտեմբերից։ Դպրոցը երկսեռ է. աշակերտները կազմում են 4 գըլխաւոր, իսկ աշակերտուհիները 3 բաժանմունք, որոնց թիւը հասնում է 60 - ի՝ 35 տղայ և 25 աղջիկ։ Գիւղը զուտ թրքախօս լինելով՝ տղայոց գ. և դ. բաժանմունքները միայն ազատ խօսում են հայերէն, իսկ մնացեալ բաժանմունքները, ինչպէս աղջիկները ըստ կարողութեան։ Առանձին ուշադրութիւն է դարձուած օր. գ. բաժանման վրայ։ Դպրոցը տուել է հանդէս Վարդանանց տօնի առիթով և կատարուել է աշակերտական զբօսանք ուսումնական նպատակով։ Թափուած քրանաթոր աշխատութիւնը, որ երևում է դպրոցի տեղեկագրից, անկասկած աւելի արդիւնաւոր կլինէր, եթէ Բաբանդուզի հայն իմանար իր մայրենի լեզուն. այսպէս ուսուցչի աշխատութիւնը կրկնակի է, բայց չնայելով այդ աննպաստ հանգամանքներին, արդիւնքն օպտակարից շատ աւելի է։ Մխիթարական երևոյթ է, որ ծնողներն ըմբռնելով ուսման կարևորութիւնը, ի հարկէ ուսուցչի ջանքերի շնորհիւ, սերտ կապուել են դպրոցի հետ։ Ուսումնարանը, Հաստատ կարելի է ասել, դրուած է ամուր հիմքերի վրայ, նա անմիջական պահանջ է դարձել տեղացիներից շատերի համար, որոնք մի ժամանակ թերահաւատութեամբ էին վերաբերուում իրանց գիւղի կրթական գործին։ Դպրոցը բոլորել է իր հնդամեա շրջանը և պահում է ընկերութեան Պատուաւոր անդամ Մեծ. պրն. Տիգրան Ա.Փրիկեանի հաշուով։

ԲԱԼԱՆԻՇԻ ԴՊՐՈՑԸ

Բաբանդուզի գաւառում

Թումաթարի դպրոցը Բալանիշ տեղափոխելու և գիւղատիրոջից արտօնութիւն ձեռք բերելու պատճառով, որ բաւական դժուարութիւնների հանդիպեցաւ, դպրոցը բացուեցաւ Յունուարին։ Յաճախում էին 17 աշակերտ, ի թիւս որոց կային և մի քանի ասորի տղաներ։ Աշակերտները կազմում էին 3 բաժանմունք։ Գիւղական համայնքը ուրախութեամբ հոգացել է վառելիքի մի մասը և ուսուցչի տրամադրութեան տակ է դրել 1 սենեակ ծառայեցնելու որպէս դասարան։ Գիւղը զուտ թրքախօս է։ Դպրոցը կառավարուում է ընկերութեան հաշուով։

ԳԵԱՐԴԱԲԱԴԻ ԴՊՐՈՑԸ

Ողմի գաւառում

Այս դպրոցը ներկայ տարեշրջանում ունէր 1 ծաղկոց, 3 տարրին բաժանմունք և մի հիմնական դասարան, 74 աշակերտով, որոնք կանոնաւոր յաճախում էին մինչև Զատիկ, երբ դաշտային աշխատանքի պատճառով այդ թիւը զգալի կերպով նուազեց։ Տարուայ ընթացքում արուել են 2 երեկոյթ, 1 հանդէս Վարդանանց տօնի առիթով և 1 աշակերտական երեկոյթ տարեմտի երեկոյին։ Երկրորդ երեկոյթի մուտքը վճարով է եղել, ծախսած 6 թումանի տոմսակներից ղանձուել է 1 թուման։ Կատարուել է դաշտային զբօսանք (դաշտ, այգի, արտ և այլն) բուսականութիւնը

ուսումնասիրելու մտքով։ Գիւղը զուտ հայաբնակ է և խոսում է մի տեսակ աղաւաղուած հայերէն։ Դպրոցը բոլորել է իր վեցամեայ շրջանը և պահւում է ընկերութեանս հաշուով, մինչդեռ հարուստ լինելով՝ ինքը կարող է հոգալ իր դպրոցի ծախքը։

ԴԷՐԷԼԷՔԻ ԴՊՐՈՑԸ

Սովորողաղում

Այս դպրոցը, որ հիմնուել է 1900 թ., այս տարի ունէր 20 աշակերտ, 4 բաժանմունքով։ Դպրոցը բացուել է Սեպտ. 28 - ին և փակուել Յունիս 7 - ին։ Ուսուցումը տեւել է 8 ամիս, որ մեծ նշանակութիւն ունի գիւղական դպրոցների համար։ Ուսուցիչը առանձնապէս ուշադրութիւն է դարձրել հայոց լեզուի և թուաբանութեան վրայ։ Տարուայ վերջին դպրոցը փակուել է հարցաքննութեամբ և հանդիսով, ներկայութեամբ գիւղի ամբողջ հայ հասարակութեան, որի թրքախօս լինելու պատճառով նիւթերը թարգմանուել են իրան մատչելի լեզուով։ Ափսոս, որ դպրոցը չունի իր յատուկ շէնքը, նա զետեղուած է մասնաւոր տան մէջ, որ ինչ ինչ անյարմարութիւններ է ներկայացնում։ Դպրոցիս բարերարն է Մեծ. պրն Ստեփան Տէր Օհանեանը, որ պարբերաբար տարեկան 1200 դրան նպաստ է տալիս։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԴԻԶԱԹԷՔԷՅԻ ԴՊՐՈՑԸ

Բարանդուզում

Այս երկսեռ դպրոցը, որ հիմնուել է 1898 թուին, այս տարի ունէր 23 աշակերտ (7 աղջիկ) 3 բաժանմունքով և 10 աշակերտուհի (1 աղջուհի) նոյնքան բաժանմունքով։ Դպրոցը բացուել է Սեպտեմբերին, իսկ կանոնաւոր պարապմունքներն սկսուել են Հոկտեմբերին։ Աշակերտները բացառութեամբ 3 - 4 հոգու ազատ խօսում են հայերէն, գրական բարբառով։ Յատուկ ուշադրութեան առարկայ է եղել տղ. գ. բաժանմունքը։ Զքաւոր աշակերտներին ձրի մատակարարուել են դասական պիտոյքները։ Այս գիւղն էլ նոյն պայմանների տակ է գտնուում, ինչ որ Բարառուն. այստեղ էլ հայ հոմայնքը անյիշելի ժամանակներից կորցրել է իր մայրենի լեզուն, այնպէս որ աշակերտները տանը սովորած են իրանց ծնողների հետ թուրքերէն կամ ասորերէն խօսել...։ Հեռու չէ այն երջանիկ բոպէն և արդէն իսկ մօտ է, երբ հայկական բարբառը պիտի հնչէ այս վայրերում, վտարելով ընտանեկան սուրը յարկից օտար և խորթ լեզուները...։ Ցնծութեամբ պէտք է յայտնել, որ դպրոցը կարողացել է ազդել ժողովրդի վրայ և հեռու է պահել նրան օտարների հետ ձուլուելուց, որ շատ սովորական երեւոյթ էր 5—6 տարի առաջ։ Այս երկսեռ դպրոցների ծախքը նոյնպէս 1899 թուից մարդասիրաբար յանձն է առել և հոգում է Մեծ. Պրն. Տիգրան Ա.Ֆրիկեանը։

ԹՈՎԱԼԱՐԻ ԿԱՄ ԹԱՂԻԱԲԱԴԻ

„ԱՐԱՄ ՂԱԶԱՐԵԱՆ ԴՊՐՈՑԸ“

Միանդուաքում

Ինչպէս անցեալ տարեշրջանի տեղեկագրից յայտնի է, հանգուցեալ Արամ Ղազարեանի յիշատակին 1 դպրոց պիտի հիմնուէր Միանդուաք թրքախօս գաւառամասում։ Ցանկանալով հէնց այս տարեշրջանում դպրոցը բացուած տեսնել, վարչութիւնս աճապարեց ձեռնարկել դպրոցական շինութեան գործին, ըստ որում ամբողջ գիւղում չկար մի շատ ու քիչ շնորհքով տուն, ուր հնար լինէր ժամանակաւորապէս զետեղել սաներին։ Դպրոցը բացուեցաւ Հոկտ. 6-ից, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնը սկսուեց նոյն ամսի 17-ից։ Չնայելով որ դրասեղան-նստարանների ուշ վերջանալու պատճառով ուսուցումը մի փոքր արգելքների հանդիպեցաւ, բայց և այնպէս արդիւնքը, ուսուցչի քրտնաջան աշխատութեան շնորհիւ, սպասածից շատ աւելի է։ Տարուայ սկզբից մինչև Մարտ կանոնաւոր յաճախում էին 30 աշակերտ և 10 աշակերտուհի (40 հոգի), որից յետոյ երկրագործական պարապմունքների պատճառով այդ թիւը իջաւ 25-ի և անփոփոխ մնաց մինչև տարուայ վերջը։ Աշակերտները գալիս էին նաև Կարավերան և Քեաբլա-Ըզա-խան գիւղերից։ Աշակերտները ըստ մեծի մասին երկրագործ և արհեստաւոր ծնողների որդիներ էին, ուստանում էին և կարայի երեխաներ։ Գիւղական համայնքի մէջ ամենաաղքատ, ոչ-երկրագործ, հողազուրկ դասակարգը կոչւում է կարա (սև), իսկապէս արժանի այս անուան...։ Աշակերտ և աշակերտուհիները, որոնք բաժանուած էին 3

կարգի, բացառութեամբ 1-2-ի նոր սկսողներ էին և չգիտէին նոյն իսկ կանոնաւոր թուրքերէն խօսել։ Ուսուցիչը շատ ուշադրութիւն է դարձրել հայոց լեզուի վրայ, նրա աշխատութիւնը կրկնակի է եղել։ Խիստ մխիթարական և ուրախալի երևոյթ է, ասում է ուսուցչական տեղեկագիրը, որ աշակերտները դպրոցում իրանց ստացած պաշարով աշխատում են խմորել իրանց ծնողներին, որոնք ամենայարուած հետաքրքրութեամբ լսում են իրանց զաւակների պատմածները։ Այսօր գիւղական խրճիթներում կանայք, աղջիկներ, տղամարդիկ և նոյն իսկ թուրք և քուրդ ծառաները երգում են մի քանի հայերէն երգեր, որոնք սովորել են աշակերտներից...։ Աւելորդ չենք համարում յիշել աշակերտներից մի քանիսի անունները՝ Իսքէնդէր, Էլխանի, Գիւարգիզ, Շարբաթ, Շաղէ, Աֆրազ, Կըզկալիդ, Նազխանըմ, Սալբի, Կէնդաբ և այլն թուրք անուններ,...։ Երգի և ձեռագործի շաբաթական 5 դասը ազգասիրաբար անցել է Տիկ. Ալմաստ Մելիք-Սալեաղեանը, որին վարչութիւնս հրապարակապէս իր շնորհակալութիւնն է յայտնում։

Մայիս 30-ին հրապարակական հարցաքննութեամբ, որին ներկայ են եղել աշակերտների ծնողներն ու շրջանի բոլոր առաջաւոր մարդիկ, փակուել է դպրոցը։ Հարցաքննութիւնից առաջ արժ. Տէր Հմայեակ քահ. Ներսիսեանը փառաւոր հոգեհանգիստ է կատարել ի յիշատակ դպրոցի հանգուցեալ բարերարի։ Սեղանի երեսը ամբողջապէս ծածկուած է եղել ծաղկեա սիրուն պսակներով։ Պաշտամունքից յետոյ Տ. Հմայեակ հայրը թուրքերէն լեզուով աւուր պատշաճի քարոզ է խօսել, բացատրելով ուսման և կրթութեան յարգն ու նշանակութիւնը։ Հանդիսականները հեռացել են խիստ գոհ և ուրախ տպաւորութեան տակ։ Վարչութիւնս ստացել է գիւղի հասարակութիւնից մի հետաքրքիր հանրագրութիւն, որով գոհունակութիւն յայտնելով իրանց զաւակների այսքան կարճ միջոցում ցոյց տուած յառաջադի-

մութեան համար, խնդրում են իրանց երախտագիտութեան զգացմունքը յայտնել Հանգուցեալ Ա. Ղազարեանի կտակակատարներին։ Դպրոցը, որ լաւ ապագայ է խոստանում, պահւում է Հանգուցեալի կտակած 9000 ռուբլուց ստացուած տոկոսի արդիւնքով։

ԻՔԻ — ԱՂԱՋԻ ԴՊՐՈՑԸ

Որմի Գահանում

Դպրոցը բացուել է Հոկտ. սկզբին 7 աշակերտով, այդ թիւը հետզհետէ աւելանալով Դեկտեմբերին հասել է 38 - ի։ Կանոնաւոր յաճախել են 23 աշակերտ։ Պարապմունքները տեւել են մինչ Ապրիլի վերջը։ Ուսուցումը եղել է 7 ամիս 10 օր։ Աշակերտները կազմում էին 4 նախապատրաստական բաժանմունք և 1 հիմնական դասարան։ Ուսուցման արդիւնքը զոհացուցիչ է և դպրոցի տեղեկագիրն ու ծրագիրը ընդարձակ։ Այս դպրոցը, որ հիմնուել է 1899 թուին և բոլորել է իր հնգամեայ շրջանը, պահւում է միայն ընկերութեանս հաշուով։

ՆԱԽԻՋԵՒԱՆ - ԹԷՓԷԻ ԴՊՐՈՑԸ

Նագլու - Զայ Գահանում

Գիւղը գտնւում է Նագլու - Զայ գաւառակի համանուն գետակի աջ ափին և զուտ Հայաբնակ է։ Ունի 90 տուն բնակիչ։ 1892 թուին Գարեգին Բաղէշցեանի ջանքերի շնորհիւ կառուցուել է դպրոցը, որ այս 11 տարուայ ընթացքում գտնուել է խիստ երերուն վիճակի մէջ, երբեմն

փակ, երբեմն բաց, երբեմն էլ տարիներով փակ է մնացել. ունեցել է անուանական ուսուցիչներ, իսկ ներկայ 1903 - 4 ուս. տարեշրջանում Մեծ. Պրն. Տիգրան Աֆրիկեանի հաշուով այս գիւղում բացուեցաւ երկսեռ դպրոց, որ ունէր միջին թուով 35 աշակերտ 4 բաժանմունքով և 20 աշակերտուհի 3 բաժանմունքով։ Տարուայ ընթացքում եղել են ամիսներ, երբ սանների թիւը հասել է 80 - ի։ Գիւղը կարող է տալ 100 - 120 աշակերտ - աշակերտուհի։ Վարդապետանց տօնի առթիւ տրուել է ներկայացում և կատարուել է դաշտային զբօսանք, ուր բացատրուել են հողերի, քարերի, բոյսերի... մասին անհրաժեշտ գիտելիքներ։ Ընդունելով որ դպրոցը նոր է, մանաւանդ իգական մասը, բայց և այնպէս կանոնաւոր ընթացք ունէր, ուսումը տեւել է մինչ մայիս վերջ։

ՈՐՄԻԻ ԴՊՐՈՑԸ

Հահանում Քաղաքում

Այս դպրոցը, որ հիմնուել է 1900 թուին, բացուել է Սեպտեմբերի սկզբին 18 աշակերտով, որոնց թիւը հետզհետէ աճելով տարուայ վերջին հասել է 26 - ի, որոնցից 9 օրիորդներ էին։ Դպրոցը բաղկացած էր 3 նախապատրաստական բաժանումից և 1 հիմնական դասարանից։ Տարուայ ընթացքում տրուել է 1 ներկայացում։ Վարդանանց տօնը կատարուել է հանդիսով ու ներկայացումով։ Վիճակահանութեան են տրուել աշակերտուհիների ձեռագործները։ Գարնան կատարուել է դաշտային զբօսանք ուսումնական նպատակով.— իրազննական դասերի և բնական աշխարհագրութեան նկատմամբ տրուել են կարևոր բացատրութիւններ։ Իբրև մրցանակ ուսուցիչը լաւ սովորող աշա-

կերտներին բաժանել է 360-ից աւելի փոքրիկ պատկերներ։ Աշակերտները համազգեստ են կրում։ Ընկերութեանս դպրոցների մէջ միակն է, որ բոլորում է 9 ամեայ կանոնաւոր շրջան։ Դպրոցիս բարերարն է Մեծ. Պրն. Ալէքսանդրը Մէլիք-Ազարեանը, որ տարեկան 300 ռուբլի նպաստ է տալիս։ Ծածկելու դպրոցի վերաբերեալ միւս ծախքերն ու նրան բարգաւաճ վիճակի մէջ դնելու համար, դարձնելով գաւառական կենդրոնական դպրոց, վարչութեանս խնդրանաց համաձայն յարգելի բարերարը խոստացել է առաջիկայ տարուանից իր նպաստի քանակն աւելացնել 150 ռուբլով, վճարելով ընդամէնը 450 ռուբլի։ Այդ մասին ընկերութիւնս հրապարակապէս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում։

ՌԱՀՈՒԱՅԻ ԴՊՐՈՑԸ

Որմի գահատում

Այս դպրոցը երկսեռ է։ Կանոնաւոր պարապմունքները սկսուել են հոկտեմբերից։ Տարուայ սկզբում աշակերտ — աշակերտուհիների թիւը 97 էր, յետոյ իջաւ 85-ի, իսկ դարձեան երկրագործական պարապմունքների սկսուելու հետ սաների թիւը հեռզհետէ պակասեց, այնպէս որ Մայիսին յաճախում էին 18 — 20 հոգի։ Աշակերտները կազմում էին 4, իսկ աշակերտուհիները 3 բաժանմունք։ Բոլոր գիւղական դպրոցներում, սակայն բացառութեամբ, նկատելի է այդ անկանոն յաճախելու վնասակար երևոյթը, որի առաջն առնելու համար վարչութիւնս առաջիկայում արմատական միջոցի կդիմէ։ Բայց միևնոյն ժամանակ ենկատի պէտք է ունենալ այն ծանրակշիռ հանգամանքը, որ տնտեսական աննախանձելի կացութեան պատճառով ծնողների ստուար մասը ոչ միայն ծառայեցնում և ծառայութեան են տալիս

(հօտաղութիւն) իրանց տղաներին, այլ և բանուորութեան ուղարկում իրանց աղջիկներին, որոնցից ոմանք կովարածութեամբ, ոմանք դաշտային գործերով և ոմանք էլ այգի պահելով են զբաղւում, օրական 5—6 շահի վարձով...։ Դպրոցն ունի իր յատուկ շէնքը։ Գիւղը բաղկացած է 150 տունից։ Դպրոցը, որ հիմնուել է 1898 թուին և առաջին տարիները յատուկ էր միայն իգական սեռին և վերջին երեք տարիներս արական, այս տարի դրուեցաւ Մեծ. պարոն Տիգրան Աֆրիկեանի հաշուին։

Յիշեալ 11 դպրոցներում, որոնցից 4-ը պահւում է ընկերութեանս, իսկ 7-ը բարերարների հաշուով, ուսանում էին միջին թուով 420 երկսեռ սաներ՝ 320 աշակերտ և 100 աշակերտուհի։ Զմերային ամիսներում այդ թիւը հասնում էր 5-600-ի։ Աւանդուել են հետևեալ առարկաները՝ Կրօն, Հայոց լեզու, Թուաբանութիւն, Հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, Գծագրութիւն, Գրութիւն, Երգեցողութիւն, Մարմնամարզութիւն և Ձեռագործ։ Լուրջ ուշադրութիւն է դարձուած ծրագրի և դասաւանդութեան միօրինակութեան վրայ։ Ուսուցիչներից ոմանք աչքի առաջ ունենալով աշակերտների զարգացման չափը և տեղական հանգամանքները

աննշան փոփոխութիւններ են մտցրել ծրագրի մէջ, կամ ըստ իրանց մի փոքր յաւելումներ և յապաւումներ են արել։ Վարչութեանս յանձնարարութեամբ Որմիի ուսուցիչ պ. Միքայել Պապիկեանը, որ միևնոյն ժամանակ տեսչի պաշտօն ունի, տարուայ ընթացքում, օգուտ քաղելով տօներից և դպրոցական արձակուրդներից, այցելել է շրջակայ դպրոցները և իր տպաւորութիւնները հանդերձ նկատողութիւններով հաղորդել վարչութեանս։ Առաջիկայ տարեշրջանում շրջիկ տեսչի գործը՝ դպրոցները յաճախ այցելելու կարևոր խնդիրը, կղզուի նպաստաւոր հիմունքների վրայ։

Խիստ մեխիթարական և հոգեպարար երևոյթ է, որ թափուած ջանքերն ու ծախսուած դրամները տակաւ առ տակաւ իրանց նպատակին են ծառայում։ Ուսման ու կրթութեան փրկարար լոյսը հետզհետէ թափանցում է պարսկահայ շինականի խրճիթը։ Հայ գեղջուկը ըմբռնելով կրթական գործի յարգն ու նշանակութիւնը՝ սերտ կապւում է դպրոցի և եկեղեցու հետ, աշխատում է ձեռք բերել իր կորցրած ազգային առանձնայատկութիւնները՝ լեզուն, կրօնը, սովորութիւնները և այլն, հետևապէս ոտք կոխում ինքնաճանաչութեան շաւղի վրայ...։ Ընկերութեանս նիւթական միջոցների ընդարձակուելուց շատ բան է կախուած...։ Նրա գործունէութեան շրջանը ընդլայնելու համար և անշեղ ընթանալու համար մի անգամ դրուած ուղիով, արտաքին օժանդակութիւն է պէտք...։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԹԱՒՐԻԶԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընկերութեանս հաշուով տարիներից ի վեր պահւում են քաղաքումս 2 մանկապարտէզ՝ Ղալայում և Լիլաւայում։ Ղալայի մանկապարտէզը այս տարի յաճախում էին 45 երկսեռ սաներ, որոնցից 32-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 13-ը ձրիավարժ։ Լիլաւայի մանկապարտէզը յաճախում էին 46 երկսեռ սաներ, որոնցից 27 թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 22-ը ձրիավարժ։ Մանկապարտէզները գանւում էին կանոնաւոր ընթացքում։ Վարչութիւնս մասնաւորապէս իր հոգացութեան առարկայ է շինել այդ հաստատութիւնները։ Այս տարի Մոսկուայից բերել տրուեցան ձեռագործի նիւթեր և մանկական խաղալիքներ։

Ընկերութիւնս 1903-4 ուս. տարեշրջանի ընթացքում տուել է Ղալայում անցեալ Յուլիս 15-ին համերկրացի ուսանողների նախաձեռնութեամբ և մի քանի տիկինների և օրիորդների բարեհաճ մասնակցութեամբ ներկայացում և պարահանդէս, Դեկտ. 28-ին և տարեմտի երեկոյին 2 տօնածառ՝ 1) Լիլաւայում, ուր վիճակահանութեան են տրուել նաև արհեստանոցների ձեռագործները և 2) Ղալայում, որի զուտ արդիւնքի կէսը յատկացուեցաւ նոյն թաղի երկսեռ դպրոցներին, իսկ Մայիս 1-ին սիրողների բարեհաճ մասնակցութեամբ դարձեալ 1 ներկայացում։ Տօնածառներին երեխաներին բաժանուել են շաքարեղէն և խաղալիքներ։ Վարչութիւնս հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն յարգելի տիկիններին, օրիորդներին և պարոններին,

ինչպէս և „Արամեան և Ս. Աննայեան“ երկսեռ դպրոցների տեսչութեան և ուսուցչական խմբի անդամներից նրանց, որոնք սիրայօժար կերպով յանձնառու եղան տանելու գործի կազմակերպութեան ծանրութիւնը։

Ընկերութիւնս Ղալայի մանկապարտէզում ունի իր առանձին գրադարան-ընթերցարանը, որի գռները բաց են բաղաքիս ընթերցասէր տիկինների և օրիորդների առաջ։ Գրադարանն ունի 500-ից աւելի ընթերցանութեան գրքեր և ստանում է պարբերական թերթեր։

Սոյն տարեշրջանում ընկերութիւնս ունէր 68 տարեկան, 40 մշտական անդամուհի և 12 պատուաւոր անդամուհի ու անդամ. ընդամենը 120 հոգի։

Տարուայ ընթացքում ընկերութիւնս գործի վերաբերմամբ կայացել են 29 վարչական և 3 ընդհանուր ժողով։ Գրուել են 227-պաշտօնական նամակներ և գրութիւններ։

Հաշիւներով, դպրոցների տեղեկագրերով և աշակերտների գրաւոր աշխատանքներով հետաքրքրուող անձինք կարող են դիմել վարչութեանս և մանրամասն բացատրութիւն ստանալ։

Անկեղծ խորհուրդներն ու փաստացի նկատողութիւնները վարչութիւնս ամենայն պատրաստակամութեամբ կլսէ։

Խնդրում է գրական նպաստ, դասական առարկաներ, ընթերցանութեան գրքեր. պարբերական հրատարակութիւններ, նամակ և այլ ուղարկել հետեւեալ հասցէով.

Société Unie de bienfaisance des dames
Arméniennes de Tauris
A Tauris (Perse)

Ծանօթ. Ընկերութեանս տարեկան անդամները Ռուսաստանի համար վճարում են 4 ռուբլի, մշտական անդամուհիները միանուագ 50 ռուբլի, իսկ պատուաւոր անդամներին ընտրում է ընդհանուր ժողովը, նայելով նրանց ընկերութեանս մատուցած բարոյական և նիւթական աջակցութեան չափին։ Ցանկացողներին ընկերութեանս Կանոնադրութիւնը ուղարկւում է ձրի։

Վարչական անդամուհիները,
Նախագահ՝ Սրբուհի Ամատունի,
Գանձապահ՝ Զաբէլ Եղիազարեան,

Խորհրդականներ՝
Արծուիկ Նազարբէգեան,
Հեղինէ Ժորժ,
Հռիփսիմէ Գրինֆիլդ,
Մանիա Գրիգորեան,
Մարան Նազարբէգեան,

9 Սեպտ. 1904
Թաւրիզ

ՄՈՒՏՔ հաշվեցույց 1903 Յուլիս 1-ից

	դրամ	կոպ.	դրամ	կոպ
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1903			61615	97
Ստացուած անդամավճարներ	1440	—		
,, Թոշակագրամներ Էիլ. մնկ. պլ	1085	—		
,, ,, Ղալայի ,,	1455	—		
,, Նպաստներ,	13534	10		
,, տոկոսներ,	5611	51		
Ներկայացումներից և տնտած առերից արդիւնք	4402	25		
Զանազան մուտքեր	900	55		
,,Ա. Ղազարեան,, դպրոցի հաշուից	6538	22		
Տ. Ռֆրիկեանի դպրոցների աւելորդ ծախքը.	462	73	35429	36
			97045	33

մինչ 1904 Յունիս 30 ԵԼՔ

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Աղաղանի դպրոցի ծախքը	1486	30		
Բաբառուի ,, ,,	2985	67		
Բալանիշի ,, ,,	317	45		
Գեարդաբաղի ,, ,,	1083	60		
Դէրէլէքի ,, ,,	1195	—		
Դիզաթէքէյի ,, ,,	3037	80		
„Ա, Ղազարեան„ ,, *)	5647	80		
Իւքի Աղաջի ,, ,,	1043	15		
Էիլաւայի մնկ. պարտեզի ,,	2191	47		
Ղալայի ,, ,,	3270	47		
Նախիջևան-Թէփէի դպրոցի ,,	2141	80		
Որմիի ,, ,,	2375	75		
Ռահուայի ,, ,,	2297	45		
Ս. Աննաեան օր „ Գ. դասարանի նպաստ	3000	—		
Զանազան ծախքեր, ռոճիկներ և այլն	5761	90		
,, Նպաստներ տուած	1918	15		
Կանխավճար ուսուցիչներին	430	—		
Կորուստ (սխալմունք տոկ. 1902 թուին)	462	07	40645	84
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1904			56399	49
			97045	33

*) Նշանակ. Անցեալ տարուայ սկզբին կանխավճար է տրուել 700 դրամ, տրու-

մինչ 1904 Յունիս 30 ԵԼՔ

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
1903 թ. Յուլիս 1—1904 Յունիս 30 դպրոցի դպրոցական շինութեան, ուսուցչի ռոճիկ և այլն			6538	22
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1904			49890	70
			56424	92

*) ած տոկոս 190,42 890,42+5647,80 այս տարուայ ծախքի՝ ընդամենը 6538 դրամ և 22 հար

ՄՈՒՏՔ Հաշուեցոյց 1903 թիւ Յուլիս 1-ից

	դրամ	կոպ.	դրամ	կոպ.
Հաշուեւոյց Թովլալաբի կամ Թաղիաբաղի „Ա Դաղարեան“ զպ. հիմնական դրամագլուխ առ 16 Հոկտ. 1903 թ. 9000ը,			51724	10
Ստացուած տոկոսներ			4704	77
			56424	92

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0219948

42. 766